ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2020 թ.

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ
ԱԼԻԿ ՊԱՌԱՎՅԱՆԻՆ

ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ, 6փ., 12 տուն
Հեռ.՝ (+374)93-77-93-23, էլ. փոստ՝ alik.pas@mail.ru

Հարգելի քաղաքացի

Ի պատասխան Ձեր 15.02.2021թ. N⁰-106409 էլեկտրոնային հարցման, տեղեկացնում եմ, որ կառավարության կողմից իրականացվում են գյուղատնտեսական ոլորտի պետական օժանդակության մի շարք ծրագրեր՝ բուսաբուծության, անասնաբուծության ու անասնապահության, ինչպես նաև ջերմատնային տնտեսությունների ներդրման բնագավառներում, որոնք ունեն պետական աջակցության բաղադրիչ և արտոնյալ պայմաններ՝ գյուղատնտեսների համար: Ծրագրերից օգտվելու համար կարող եք ծանոթանալ ներկայացվող ամբողջ ծրագրերին՝ մուտք գործելով www.mineconomy.am (ՀՀ էկոնոմիկայի նախարարություն) կայք էջ՝ «Տեղեկատվություն» - «Ծրագրեր» - «Գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրեր» https://mineconomy.am/page/1338 ենթաբաժին, կամ այցելել Լոռու մարզպետարան գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն (հեռախոսահամար՝ /0322/4-30-99):

Հավելեմ, որ տրամադրվող վարկերը նպատակային են, այսինքն պետք է ուղղվեն միայն գյուղատնտեսական գործունեությանը, իսկ ծրագրին մասնակից ֆինանսական կառույցները վարկերը տրամադրում են՝ ելնելով դիմորդի վարկունակությունից:

Կարող եք ծանոթանալ նաև ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում (EU-GALA) ծրագրին, մուտք գործելով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (www.mineconomy.am), «Մեդիա» - «Հայտարարություններ» բաժին:

Հարգանքով՝

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կատարող՝ Ա. Բաղդասարյան
Գյուղ. և բնապահպ. վարչություն
հեռ. /0322/4-30-99